ՀՀ ոստիկանության 2011 թ. բյուջեի կատարման
տարեկան հաշվետվությունը

ՀՀ 2011 թ. պետական բյուջեով ՀՀ ոստիկանության գործունեության ապահովման հիմնական ծրագրերով հատկացվել է **24.7 մլրդ. դրամ**, որը նախորդ՝ 2010 թ. նույն ցուցանիշը գերազանցում է 1.1 մլրդ դրամով կամ մոտ 5 %-ով:
Հաշվետու տարում, ըստ էության, ապահովվել է նախատեսված հատկացումների ֆինանսավորումն ամբողջությամբ՝ 99.9 %-ով:
Նշված հատկացումների հիմնական մասը՝ 95.7 %-ը, **23.6 մլրդ. դրամ** գումարով, բաժին է ընկնում ՀՀ ոստիկանության պահպանման ծախսերին, որը ներառված է «Հասարակական կարգի պահպանության ապահովում» ծրագրում:
Բյուջետային հատկացումների նախորդ տարվա նկատմամբ հաշվետու տարվա նշված աճն ամբողջությամբ բաժին է ընկնում «Հասարակական կարգի պահպանության ապահովում» ծրագրին և նախատեսված էր ոստիկանության զորքերի վերակազմավորման ծրագրով 2011 թ.-ին շարքային կազմի պայմանագրային զինծառայողների թվաքանակի աճով պայմանավորված աշխատավարձի, ինչպես և ոստիկանության առանձին ստորաբաժանումների ծառայողների քաղաքացիական հատուկ ծառայության անցմամբ պայմանավորված հարկերի գծով լրացուցիչ ծախսերի ֆինանսավորումն ապահովելու համար:
Ոստիկանության մյուս ծրագրերի գծով պետական բյուջեից հատկացումները, ըստ էության, պահպանել են նախորդ տարվա չափերը և կազմել են.

- «Ավտոպետհամարանիշերի ձեռքբերում» և «ՀՀ անձնագրերի բլանկների տպագրություն» ծրագրերը՝ համապատասխանաբար 236,2 մլն. դրամ և 172,1 մլն. դրամ,
- «Դեղորայքի տրամադրում ամբուլատոր-պոլիկլինիկական, հիվանդանոցային բուժօգնություն ստացողներին եւ հատուկ խմբերում ընդգրկված ֆիզիկական անձանց» ծրագրային ճշգրտված հատկացումները՝ 82.3 մլն. դրամ,
- «Բարձրագույն մասնագիտական կրթություն» ծրագրով, ներառյալ կրթաթոշակները՝ 577.3 մլն. դրամ:

Ամբողջությամբ ապահովվել է նաև վերոնշյալ ծրագրերով նախատեսված միջոցառումների կատարումը:
Նշված ծրագրերից զատ, հաշվետու տարվա ընթացքում հանրապետությունում անցկացված տարբեր տեղական ինքնակառավարման ընտրությունների, օտարերկրյա պատվիրակությունների ընդունելությունների, դատարան տրվող հայցադիմումների համար ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից ՀՀ ոստիկանությանը լրացուցիչ հատկացվել է ևս՝ 40.8 մլն. դրամ:
Այսպիսով Պետական բյուջեից հաշվետու տարում Ոստիկանությանը ընդհանուր առմամբ հատկացված 24.7 մլրդ. դրամից փաստացի ծախսը կազմել է 24.64 մլրդ. դրամ:
ՀՀ ոստիկանության 2011 թ. **արտաբյուջետային միջոցների** գծով ընդամենը ծախսը ներառյալ տարեսկզբի՝ 1.75 մլրդ. դրամ մնացորդը կազմել է **11.7 մլրդ. դրամ (պլանը՝ 13.1 մլրդ. դրամ)**: Արտաբյուջետային միջոցների ծախսերը կատարվել է 89.2 %-ով և

հաշվետու տարվա վերջին այդ միջոցների գծով գանձապետական հաշիվների մնացորդը կազմել է **1.4 մլրդ. դրամ**:

Այսպիսով, **ՀՀ ոստիկանության** պահպանման եւ ծրագրերի իրագործման բոլոր աղբյուրների գծով **հատկացումները կազմել են 37.8 մլրդ. Դրամ, փաստացի ծախսը՝ 36.4 մլրդ, դրամ, մնացորդը՝ 1.4 մլրդ. դրամ:**

ՀՀ ոստիկանության հաշվետու տարվա բյուջեն ըստ առանձին ծրագրերի ունի հետևյալ կատարողականը.

«Հասարակական կարգի պահպանության ապահովում» ծրագիր

Ինչպես նշվեց ՀՀ 2011 թ. պետական բյուջեից ոստիկանությանը հատկացումների գերակշիռ մասը՝ 95.7 %-ը, **23.6 մլրդ. դրամ** նախատեսվել է «Հասարակական կարգի պահպանության ապահովում» ծրագրով:

Այդ միջոցների 99.9 %-ը, գումարով՝ **22.3 մլրդ. դրամ** նախատեսվել է ոստիկանության պահպանման ընթացիկ, իսկ 0.1 %-ը՝ մոտ **30.0 մլն. դրամ,** կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով:

Ընթացիկ ծախսերի կառուցվածքում համեմատաբար մեծ տեսակարար կշիռ ունի աշխատավարձին և դրան հավասարեցված վճարումներին՝ պարենի փոխհատուցմանը, սոցապհատկացումներին և նպաստներին ուղղվող միջոցները: Դրանք կազմում են տվյալ ծրագրի ընդամենը ծախսերի 79 %-ը, գումարով՝ 18.6 մլրդ. դրամ:

Հաշվետու տարվա Ոստիկանության բյուջեի փաստացի կատարման արդյունքում ոստիկանության աշխատողների (առանց պարտադիր ժամկետային զինծառայողների) միջին ամսական աշխատավարձը (ներառյալ պարենի փոխհատուցումը) կազմել է **130.9 հազ. դրամ**, իսկ միայն ոստիկանության կոչում ունեցող ծառայողներինը՝ **145.7 հազ. դրամ**:

Հաշվետու տարում ապահովվել է ոստիկանության ստորաբաժանումների կենսագործունեությունը, իրենց կանոնադրական խնդիրների իրականացմանն անհրաժեշտ, հիմնականում ընթացիկ կարիքներն, ըստ էության ամբողջությամբ բավարարելու առումով:

«Մասնագիտական կրթություն» ծրագիր

ՀՀ կառավարության 28.04.2011 թ. թիվ 615-Ն որոշմամբ՝ «Ոստիկանության Ակադեմիա» ՊՈԱԿ-ը վերակազմակերպվել է «Ոստիկանության կրթահամալիր» ՊՈԱԿ-ի: Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթական ծրագրերի իրականացումն ապահովվում է Կրթահամալիրի կազմում վարչությունների կարգավիճակով գործող ակադեմիայի, միջին մասնագիտական կրթական ծրագրերի իրականացումը՝ քոլեջի և նախնական մասնագիտական կրթական ծրագրերի իրականացումը՝ ուսումնական կենտրոնի կողմից:

Սահմանվել են «Ոստիկանական գործ» մասնագիտության երեք աստիճանները՝ նախնական, միջին մասնագիտական և բարձրագույն կրթության գծով:

Հաջողությամբ ներդրվում է ըստ առանձին մասնագիտացումների՝ ոստիկանների պատրաստման և առաջխաղացման համար ուսուցման, վերապատրաստման եւ ատեստավորման առաջադիմական ստանդարտները:

Հաշվետու բյուջետային տարում այդ նպատակով հատկացվել և ամբողջությամբ իրացվել է 577.3 մլն. դրամ: Այն կազմում է պետական բյուջեից ոստիկանության ընդհանուր հատկացումների՝ 2.3 %-ը և 52.0 մլն. դրամով կամ մոտ 10%-ով ավելի է, քան նախորդ տարվա նույն ցուցանիշը:
«ՀՀ ոստիկանության կրթահամալիր» ՊՈԱԿ-ի հաշվետու տարվա 530 սովորողների և 831 վերապատրաստվողների կրթական ծախսերը տարեկան մեկ սովորողի (վերապատրաստվողի) հաշվով կազմել է 424.2 հազ. դրամ:

«Պետավտոհամարանիշների ձեռքբերում» ծրագիր

Պետավտոհամարանիշերի ձեռքբերման համար ինչպես նախորդ, այնպես էլ հաշվետու տարվա բյուջեի պլանով նախատեսվել է 236,2 մլն. դրամ, կատարողականը՝ 100 %: Այդ գումարով, միավորը (զույգը) 3550 դրամով ձեռք է բերվել 66543 զույգ պետհամարանիշ:
Տարվա ընթացքում իրացվել է 76730 միավոր (ներառյալ տարեսկզբի մնացորդը), որը շուրջ 30 %-ով ավելի է, քան 2010 թ. նույն ցուցանիշը: 2011 թ. ընթացքում պետհամարանիշերի իրացումից պետական բյուջեի զուտ մուտքերը կազմել են 684.56 մլն. դրամ:

«ՀՀ անձնագրերի բլանկների տպագրություն» ծրագիր

2011 թ. պետական բյուջեով նախատեսվել է 173,6 մլն. դրամ, փաստացի ծախսը կազմել է 163.0 մլն. դրամ, 94 %:
2011 թ. տրվել է 397924 անձնագիր, այն դեպքում երբ 2009-2010 թթ. համապատասխանաբար ըստ տարիների՝ 201426 և 268000 անձնագիր: Աճը՝ 2010 թ. նկատմամբ կազմել է՝ 129924 միավոր կամ 48.4 %: Անձնագրերի ձեռք բերման բյուջետային հատկացումները գերազանցող խմբաքանակի գնումը կատարվել է ի հաշիվ Ոստիկանության արտաբյուջետային միջոցների:
Նախորդ տարիների նկատմամբ հաշվետու տարում անձնագրերի տրման աննախադեպ աճը պայմանավորված է նախկինում տրված անձնագրերի ժամկետները, այդ թվում նաև վավերականության երկարաձգմամբ հանդերձ օրենքով սահմանված ժամկետները լրանալու, Շենգենյան համաձայնության պետություններ մուտքի վիզաների տրամադրումը 10 տարուց ավելի ժամկետ ունեցող անձնագրերով սահմանափակելու հիմնական հանգամանքներով:

«Դեղորայքի տրամադրում ամբուլատոր-պոլիկլինիկական, հիվանդանոցային բուժօգնություն ստացողներին եւ հատուկ խմբերում ընդգրկված ֆիզիկական անձանց ծրագիր»

Ճշտված ծրագրով նախատեսվել և ամբողջությամբ իրացվել է 82.3 մլն. դրամ, որի շրջանակներում ապահովվել է ոստիկանության համակարգի ծառայողներին ամբուլատոր եւ ստացիոնար բուժսպասարկման ծառայությունների մատուցմանն անհրաժեշտ դեղորայքով, վիրակապային եւ լաբորատոր նյութերով, սանիտարահիգիենիկ պարագաներով:

Ոստիկանության արտաբյուջետային միջոցները

ՀՀ ոստիկանության արտաբյուջետային միջոցները ձևավորվում և օգտագործվում են «Ոստիկանության մասին», «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքների, ՀՀ կառավարության համապատասխան որոշումների հիման վրա :

ՀՀ ոստիկանության և նրա կառուցվածքային ստորաբաժանումների **արտաբյուջետային միջոցների** նախահաշիվներով նախատեսված՝ **11.3 մլրդ. դրամ մուտքերը** հաշվետու տարում կատարվել է 100 %-ով (99.96 %):

Ըստ գոյացման աղբյուրների՝ ոստիկանության արտաբյուջետային եկամուտներն ունեն հետևյալ կառուցվածքը՝

- մուտքեր պայմանագրային հիմունքներով պահպանության և անվտանգության ապահովման ծառայությունների մատուցման գծով՝ 6.0 մլրդ. դրամ (ամբողջի 52.8 %-ը), որը նախորդ տարվա փաստացի մուտքերից ավելի է 246.6 մլն. դրամով կամ 4.3 %-ով,
- ՃՈ տուգանքներից և ծառայությունների մատուցումից գոյացող միջոցներ՝ 4.95 մլրդ. դրամ (ամբողջի 43.7 %-ը) կամ նախորդ տարվա փաստացի՝ 4.89 մլրդ. դրամ ցուցանիշից 57.7 մլն. դրամով ավելի,
- ՀՀ քաղաքացու անձնագիր տալու կամ փոխանակելու վճարովի ծառայությունների գծով մուտքեր՝ 387.8 մլն. դրամ (ամբողջի 3.4 %-ը), որը նախորդ տարվա մուտքերը գերազանցում է 112.7 մլն. դրամով կամ մոտ 41 %-ով,
- մուտքեր քաղաքացիական անձանց բժշկական օգնության և բուժսպասարկման վճարովի ծառայությունների մատուցման գծով՝ 7.0 մլն. դրամ (0.06 %) , որը 0.3 մլն. դրամով կամ 4.5 %-ով ավելի է, քան նախորդ տարվա փաստացի մուուտքերը:

Արտաբյուջետային միջոցների ծախսային մասի հաշվետու տարվա կատարողականը կազմել է 11.7 մլրդ. դրամ , տարեվերջի մնացորդը՝ 1.4 մլրդ. դրամ:

Ըստ գործունեության ոլորտների արտաբյուջետային ծախսերի կառուցվածքը ունի հետևյալ պատկերը.

- պետական պահպանության և անվտանգության ապահովման ոստիկանության ստորաբաժանումներ՝ 6.0 մլրդ. դրամ (ամբողջի 51.5 %-ը), որը նախորդ տարվա՝ 2010 թ. փաստացի կատարողականը գերազանցում է 260.4 մլն. դրամով կամ 4.5 %-ով,
- ՀՀ ճանապարհային ոստիկանություն՝ 5.3 մլրդ. դրամ (ամբողջի 45.2 %-ը), որը 106.2 մլն. դրամով կամ 2.1 %-ով ավելի է ծախսերի նախորդ տարվա փաստացի կատարողականից,
- ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն՝ 370.5 մլն. դրամ (3.2 %) կամ նախորդ տարվա ծախսերից 160.2 մլն. դրամով կամ 76.2 %-ով ավելի,
- ՀՀ ոստիկանության հոսպիտալ՝ 6.2 մլն. դրամ իսկ նախորդ տարի 7.1 մլն. դրամ (-0.9 մլն. դրամ):

Արտաբյուջետային միջոցների տարեվերջի մնացորդը (եկամուտների և ծախսերի տարբերությունը) կազմել է 1.4 մլրդ. դրամ, որից 1.2 մլրդ. դրամը ՃՈ-ի արտաբյուջետային միջոցների գծով:

ՀՀ ոստիկանությունը հաշվետու տարում առաջընթաց է արձանագրել ինչպես պետական միջոցների կառավարման գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու, այնպես էլ կառուցվածքային, ֆունկցիոնալ բարեփոխումների, գործունեության թափանցիկությունն ապահովելու, ոստիկանության կողմից բնակչությանը մատուցվող ծառայությունների որակն ու մատչելիությունը բարելավելու առումով:

ՀՀ ոստիկանություն